

Ասիկայ Պոլսէն դէպ յաթոռն ուղեւորած ժամանակ՝ Կարնոյ վրայէն կ'անցնէր, ուր Սահակ Լճագին իրեն ներկայացուց Եւդոկիացի Գէորգ Վ.ը, որ միաբան էր Կարնոյ Կարմիր վանքի, եւ խնդրեց որ նորընտիր Կաթողիկոսը զանիկայ հետը տանի, եւ Էջմիածնի մէջ Եպիսկոպոս ձեռնադրէ Կարմիր վանքի վրայ. վասն զի Գէորգ, կ'ըսէր Սահակ, իր սիրելի որդին է, ինքը կը վկայէ անոր արժանաւորութեանը, եւ սոյն խնդրուածքն առաջինն է: Կարնոյ իշխաններն ու ժողովուրդը նոյն խնդրուածքը կրկնեցին, ինչպէս նաեւ Կարմիր վանուց Առաջնորդ Մշեցի Յակոբ Վ.: Կաթողիկոսն հաւանեցաւ, Էջմիածին տարաւ ու ձեռնադրեց զԳէորգ 1759ին (ըստ Ջամբոյի էջ 41՝ 1760ին), պայման դնելով՝ որ մինչեւ մահը Կարմիր վանքին մէջ իբրեւ միաբան մնայ՝ Առաջնորդին հնազանդութեան տակ, ապա թէ ոչ՝ կը ստիպուի պատժել: Գէորգ Եպիսկոպոս շատերու առջեւ խոստացաւ պայմանը պահել, եւ դարձաւ Կարմիր վանք:

Քիչ ետքը վանքին Առաջնորդը ժողովարարութեան համար զինքն արեւմտեան կողմերը կը շրջէ: Գէորգ Եպիսկոպոս կ'երթայ, եւ ամէն տեղ, մանաւանդ Եւդոկիա, իր քարոզներովն, վարդապետութեամբը եւ վարմունքովը կասկած կը յարուցանէ կաթողիկէ վարդապետութեան յարած ըլլալուն, վասն զի կաթողիկէներու նման՝ տներու մէջ Ս. Պատարագ կը մատուցանէր եւ յայտնապէս կաթողիկէ վարդապետու-